№ 154 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 17 1901 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 17 № 154

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներգործական վերաբերմունք. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ջանչեանի յիշատակին. Բագուի Մարդասիրական ընկերութեան «աշխատանքի տունը». Նամակ Բաթումից. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Իզմիրլեան մրցանակ. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Ֆրանսիայից.

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

—

Պաշտօնական շրջաններում հարց է յարուցված բարեփոխելու արդիւնագործական ընկերութիւններ կազմելու ձեւը։ Մենք յաճախ հանդիսատես ենք եղել, թէ ինչպէս քայքայվում են և լուծվում զանազան տեսակ ընկերակցութիւններ, առանց նիւթական վնաս հասցնելու իսկական մեղաւորներին և պատժելով միայն այն բազմաթիւ անձանց, որոնք միամտութիւն են ունեցել հաւատալու իրանց գործերը ընկերութեան ղեկավարներին և չը կասկածելու նրանց ազնուութեան և բարեխղճութեան վրա։

Ընկերութիւններ կազմելու կանոնադրութիւնը պէտք է որոշ կերպով ծրագրէ գործողների պատասխանատուութեան սահմանները և էական միջոցներ տայ ընկերութեան անդամների ձեռքը սանձահարելու նրա ղեկավարների քմահայաձոյքը և զեղծումների ու չարագործութիւնների առաջն առնելու։

Անկասկած լաւ և խելացի կերպով մըշակված կանոնադրութիւնը կը նպաստէ ընկերակցութիւնների բարեկամութեան. սակայն դա ունի սահմանափակ նշանակութիւն։ Ճարպիկ մարդիկ կարող են հեշտութեամբ ծառայեցնել ամենալաւ կանոնադրութիւնը իրանց հաշիւներին և միտումներին։ Աւելի կարեւոր է միւս հանգամանքը—ընկերութեան անդամների վերաբերմունքը դէպի ընկերութեան գործերը։ Քանի որ ընկերութեան անդամները կը շարունակեն անտարբեր կամ կրաւորական կերպով վերաբերվել ընդհանուր գործին, կը զեղավարվեն խնամիական հաշիւներով և մասնաւոր դիտումներով—մինչև այդ դժուար կը լինի լուրջ կերպով բարեփոխել ընկերակցութիւնների գործերը և ազատ պահել նրանց զանազան պատահարների կործանիչ ազդեցութիւնից։ Կրաւորական մասսան լռում է լռում և յանկարծ մի անգամից յուսահատվում է ու լքվում, երբ տեսնում է, որ ընկերութեան գործերը իսկապէս վտանգի շէմքումն են։

Ընկերութեան ամբողջութիւնը իր կազմող մասերով պէտք է իրապէս մասնակցէ ընկերութեան գործերին և շարունակ հսկէ գործավար մարմինների կանոնաւոր գործունէութեան վրա։ Երբ ընկերութեան անդամները ստանձնել են ներգործական դեր, որոշել են գործավար մարմինների ազատութեան համար սահմաններ, այն ժամանակ խելացի կանոնադրութիւնը կարող է նրանց էական օգուտ տալ։ Այլապէս նա կը դառնայ դարձեալ մի ձեւականութիւն, որը պահպանելու համար միշտ կարելի է գտնել բազմատեսակ միջոցներ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՋԱՆՉԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

—

Այսօր Գրիգոր Ջանչեանի մահվան առաջին տարեդարձն է։

Երբ մեռաւ Ջանչեան, մենք չատ բարձրաձայն արտայայտեցինք մեր ցաւը, նոյն իսկ ազգային ազի կերպարանք տուինք այդ դէպքին, բայց եթէ յետ նայենք այս անցած ամբողջ տարվայ վրա, կը տեսնենք, որ մեզնում գրեթէ ոչինչ չէ արված նրա յիշատակը իրապէս, գործով յարգելու համար։

Շատ բան չէր կարելի անել, չատ բան էլ մենք ինքներս չուզեցինք անել։ Զուզեցինք, որովհետեւ մեզնում հասարակութեան օգտին մի բան անելը անհրաժեշտ պահանջ չէ, այլ համարվում է մի տեսակ շռայլութիւն, որ կարելի է թոյլ տալ, երբ աւելորդ փողեր են ձեռք ընկնում եւ երբ անելիքի համար կարելի է սպասել, իբր վարձատրութիւն, փառաբանութիւն թմբուկներով եւ ծնծղաներով։

Բացառութիւններ եղան, ի հարկէ։ Գտնվեցին սակաւաթիւ մարդիկ, որոնք հասկացան, որ Ջանչեանի յիշատակը յարգելու ամենալաւ միջոցն է նպաստել նրա փայփայած գաղափարների իրագործման, պահպանելով, օրինակ, թիւրքահայ որբեր։

Բացի այդ, Մոսկվայի ուսանողները վճռեցին հրատարակել յօգուտ թիւրքահայ որբերի մի ժողովածու, նուիրված Ջանչեանի յիշատակին։ Հմակրելի գաղափար, որի իրագործման ազնիւ կամ անաջող լինելը կը տեսնենք չուտով, երբ ժողովածուն լոյս կը տեսնի։

Այդ սակաւաթիւ պարտաճանաչ հայերի թըւից դուրս մնացինք մենք, հայ իրաւաբաններս, որոնց պարծանքն էր կազմում հանգուցեալը։

Կամենալով մասամբ կատարած լինել մեր վրա այդ տեսակէտից ծանրացող պարտականութիւնները՝ ես վճռել եմ Գրիգոր Ջանչեանի յիշատակին նուիրել մի շարք ժողովրդական-իրաւաբանական հրատարակութիւններ, որոնք գործնական տեղեկութիւններ տալով ժողովրդին, մի եւ նոյն ժամանակ կը տարածեն նրա մէջ հանգուցեալի այնքան սիրած եւ այնքան փառաբանած «Մեծ ռէֆորմներից» մեծագոյնի հմակրելի գաղափարները։

Դատարանը ոչ ոքի թոյլ չէ տալիս արդարանալ օրէնքի անգիտութեամբ։ Ամեն մարդ պարտական է իմանալ իր տէրութեան օրէնքները։ Եւ սակայն մեր ամբողջ ժողովուրդը, կարելի է ասել, գաղափար չունի օրէնքից։ Հասկանալի է, թէ որքան տուժում է նա դրա շնորհիւ։ Քանի-քանի մեղադրեալներ չեն կարողանում ապացուցանել իրանց անմեղութիւնը միմիայն այն պատճառով, որ պահանջված ժամանակամիջոցից ուշ են խնդիրք տուել վրկաներ կանչելու համար կամ չեն գրել խնդիրքում, թէ ինչ հանգամանք պէտք է հաստատեն վկաները։ Քանի-քանի մարդիկ տարվում են քաղաքացիական գործեր, որովհետեւ անծանօթ են օրէնքի պահանջած ձեւականութիւններին։

Աւելացրէք դրա վրա եւ այն, որ մեր ժողովուրդը, պարսիկ եւ թիւրք բռնակալութեան տակ դարերի ընթացքում ճնշված լինելով, զուրկ է օրինաւորութեան գաղափարից եւ չը գիտէ ոչ գիտակցաբար սրբութեամբ պահպանել օրէնքը, ոչ նոյնպիսի գիտակցութեամբ պաշտպանել իր իրաւունքները։

Թէ որքան երեխայ է այդ կողմից մեր ժողովուրդը, թէ որքան նա անծանօթ է իր իրաւունքներին եւ պարտականութիւններին, փայլուն մի լուսաբանութիւն կարող է լինել դրան «Մշակի» Ախալքալաքի թղթակցի հաղորդած այն կուրեօզը (№ 152), թէ մի չանդուրեցի գիւղացի նորերս դիմել էր գաւառապետի օգնականին, խնդրելով թոյլ տալ իրան հաւաքել եւ ոչնչացնել հացահատիկներին վնասող բզէզներ։ Վնասակար բզէզ ոչնչացնելու իրաւունքից անգամ մենք վախենում ենք ազատ օգտվել։

Այդպիսի պայմաններում ժողովրդական իրաւաբանական գրքերի հրատարակութիւնը անյետաձգելի անհրաժեշտութիւն է մեզ համար, ինչպէս արդէն նկատել են «Մշակում» շատերը։ Աչխատելով մեր ոյժի չափ բաւարարութիւն տալ այդ պահանջին, յոյս ունենք, որ կը կարողանանք գտնել հրատարակիչներ այդ գրքոյկների համար։

Տ. Յովհաննիսեան

ԲԱԳՈՒԻ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ «ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏՈՒՆ»-Ը

—

Մարդասիրական ընկերութեան նոր կանոնադրութեան համաձայն՝ ընկերութեան գործունէութիւնը—ինչպէս յայտնի է—սահմանափակվում է նիւթական օժանդակութեամբ, այն էլ բազուաքնակ կամ ժամանակաւորապէս Բագու գտնվող ռուսահպատակ չքաւոր հայերին։

Այդ ուղղութեամբ ընկերութիւնը արդէն ձեռնարկել է գործը։ Տրվում են երկու տեսակ նպաստներ՝ մշտական եւ միանուագ։ Մշտական նպաստները տրվում են ամսէ ամիս՝ գլխաւորապէս տան վարձ վճարելու համար, որ, ի դէպ է ասել, մեծ չարիք է հանդիսանում այստեղ, մանաւանդ չքաւոր դասակարգի մէջ... Ցամաք հացով եօլա գնալ կարելի է լինում, զզզված չորերով, մերկ անդամներով քարշ գալ կարելի է դառնում, բայց առանց բնակարանի վարձ տալու ապրելը՝ անկարելի։ Ինչ ուզում էք, արէք, ուր ուզում էք, գնացէք, որտեղից կամենաք, ճարէք, միայն տուէք, պէտք է տաք, պէտք է վճարէք...

Սոսկալի դէպքեր են պատահում ընկերութեան վարչութեան անդամները, երբ ստուգութեան համար այցելում են չքաւոր խընդրատուների կացարանները։ Երեւակայեցէք քաղաքի հեռու ծայրերից մէկում յետ ընկած խարխուլ մի չինութիւն։ Այդ թուրքի տուն է զանազան բնակարաններով։ Այդտեղ բնակվում են չքաւորութեան հալածանքի զոհերը։ Այդպիսի տեղերում միայն կարելի է 3—4 ռուբլիով բնակարաններ ձեռք բերել։ Այդպիսի վայրերում դուք կը տեսնէք ամեն տեսակ դրկեցներ, ամեն տեսակ ընտանիքներ, եւ ամուրի գործաւորներ, եւ զառամեալ ծնողներ, եւ երեխաներով ծանրաբեռնված որբեւայրիներ, եւ մատաղահաս աղջիկներով այրիացած մայրեր...

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՑԻՑ

—

Պարիզ, յուլիս 14-ին

Ժամը առաւօտեան վեցին՝ Պարիզն արթնցաւ թնդանօթի հարուածներով, որոնք կաւեստէին ազգային տօնը։ Նախորդ իրիկունէ պարն ու խրախճանութիւնները սկսած էին արդէն։ Ամեն կարեւոր փողոցներու բերանը, ամեն հրապարակներու վրա նաւագախումբեր հաստատված էին, ժողովրդական պարը առաջնորդելու ու ամբոխը զուարճացնելու համար։

Բարեբախտաբար յուլիսի խեղդող տաքը բարեխառնվեցաւ առատ անձրեւով մը, որ տեղաց նախորդ օրվան երեկոյեան ժամը 4-էն մինչեւ կէս գիշերն անցած։ Այնպէս որ տօնին առաւօտն, երբ ամեն մարդ արթնցաւ, արեւը ամպերու ետեւ պահված էր ու սթենոլորտին մէջ կը տիրէր անուշ զովութիւն մը։ Օդի այս փոփոխութիւնը կատարեալ նպաստաւորութիւն մը եղաւ մանաւանդ զօրահանդէսին մասնակցող զինուորներուն համար։ Ամեն տարի, այս արարողութիւնը առ նուազն հարիւր հոգիի մահվան պատճառ կըլլայ։

Որպէս զի գաղափար մը կազմէք թէ պարիզցին ինչպէս կը տօնէ իր պատմութեան ամենէն նշանակալից ու գեղեցիկ էջը՝ յուլիս 14-ը՝ պէտք է գտնուէք այս րօպէին Պարիզ։ Քիչ ժողովուրդ այնքան խանդավառ, ուրախութեան ու յափշտակումի այնքան մօտ է, որքան ֆրանսացին։ Ծերունիներ տեսայ, որոնք երիտասարդի մը պէս կը ցատքռտէին ու կը պարէին։ Եւ սակայն ուրախութիւն մը որ անգիտակից է։ Պարիզցին կը հրճուի ոչ թէ նոր ոգիին յաղթանակը տօնելու համար, այլ անոր համար, որ իր պզտիկ հասակէն վարժված է այդ օրը նուիրված տեսնել պարի ու զուարճութեան։ Ամեն պատուհանէ մէյ-մէկ դրօշակ կը ծածանի քանի մը անխուսափելի լապտերներու հետ։ Փողոցներ կան, ուր լապտերներն ու դրօշակները գլխուդ վերեւ անընդհատ հովանի մը կը կազմեն։

Ամեն հրապարակներու վրա նուագածուներու բեմեր կանգնված են։ Ցաճախ, հազիւ երկու-երեք հոգի քով-քովի պարունակող նեղ փողոցի մը մէջ, խոշոր պատառի մը վրա սա խօսքերը գրված գտնելուդ կը զարմանաս. «Ici on danse» (այստեղ կը պարին)։ Ի՞նչպէս կարելի պիտի ըլլար պարել այդքան նեղ փողոցի մը մէջ, պիտի հարցնէր օտարականը։ Գաղտնիքը պարզ է սակայն։ Գինեպան մըն է, որ իր հաշուին նուագածուներու խումբ մը վարձած է, որպէս զի երաժշտութեան հրապոյրով յաճախորդ քաշէ։ Այս վարպետորդիութիւնը հաստակ է։ Գրեթէ բոլոր նուագախումբերը գինեպաններէն վճարված են՝ որոնք յուլիսի 14-ին ահագին գումարներ կիրակացնեն։ Պարիզցին սեւ օր անցուցած կըլլայ, եթէ այս օրը չը գինովնայ։

Ինչպէս ամեն տարի, ազգայնականները յուլիսի 14-ի առտուն, իրենց «ազգասիրական» ուխտագնացութիւնը չը մոռցան կատարելու Սարազբուրգի արձանին։ Սովորութիւն մըն է ասիկա, որ ունի իր մէջ իր խորունկ հեգնութիւնը։ Գրանսայի չովէնները Ալզաս-Լոռէնը Գերմանիայէն ետ առնելու անկարող են։ Երբ պատերազմ մը ծագէր իրենց երկրին ու Գերմանիայի մէջ, իրենք պիտի ըլլային առաջինը՝ դասալքութեան օրինակը տուող։ Այն բոլոր Դօն-Քիշոթները՝ սկսած Քոպէէն, Լըմէթրէն մինչեւ Միլլոան՝ որ խաղաղութեան ժամանակ իրենց ժորթէն դուրս կուգան կռուելու համար, որ ամեն օր Ֆրանսայի ժողովուրդը կը հրաւիրեն աշխարհի վրա գոյութիւն ունեցող ո եւ է պետութեան դէմ չափվելու, այս բոլոր քստմնելի մարդուկները ծակէ ծակ մըտան, երբ իրենց այնքան սրտմաշուքով սխքաշած վայրկեանը հասաւ, այսինքն ֆրանկո-գերման պատերազմի ժամանակ։ Հիմա որ այս բոլոր անզուսպ հերոսները իրենց զինուորագրվելու տարիքը անցուցած են ու իրենց կողքին համար ո եւ է վախ չը կայ, հասարակութեան առջեւ կը ցցուին վրէժխնդրութեան կրակէ բառերով։ Ստրազբուրգ քաղաքը՝ ատենօք Ֆրանսական երկիր, այսօր գերմանական հող է։ Դէրուլէդի ծառաները փոխանակ երթալու իրենցմէ խլուած հողին վրա անձատուր ըլլալու իրենց հայրենասիրական խեղկատակ ցոյցերուն, փոխանակ երթալու գրաւելու Ստրազբուրգը, աւելի դիւցազնական կը համարեն Ստրազբուրգի արձանը գրաւել, որ կը գտնուի... Ֆրանսական հողի վրա։

Ազգայնականներու այս ծիծաղելի ցոյցին բոլորովին հակառակ ուրիշ ցոյց մը կատարվեցաւ այս տարի։ Ընկերվարական մէկ քանի համախմբումներ զացին Ստրազբուրգի արձանին առջեւ բողոքելու համար պատերազմին ու միլիտարիզմին դէմ։ Արձանին պատուանդանին վրա զետեղեցին պակ մը հետեւեալ արձանագրութեամբ.

Հայրենիքներու զոհերուն։

Այս ճշմարտապէս հայրենասիրական ցոյցէն յետոյ, ամենքը «գետինն անցնի պատերազմը», «կեցցէ՛ մարդկութիւնը, կեցցէ՛ ժողովուրդներու եղբայրութիւնը, կեցցէ՛ համաշխարհայնութիւնը» աղաղակեցին ու Քոնքորի հրապարակէն հեռացան Էօժէն Պոթիէի «Internatioale» երգով։

Այս օրուան էն կարեւոր արարողութիւնը զօրահանդէսն է։ Հանրապետութեան նախագահին, նախարարներուն, բարձրաստիճան պաշտօնեաներուն եւ օտար երկիրներու դեսպանութեանց ներկայութեան, Պարիզի բանակը, պատերազմական նախարարին հրամանատարութեան տակ, պէտք է իր այլ եւ այլ զէնքի գունդերովը անց կենայ։

Հանդէսին ներկայ գտնվելու տոմս մը հայթայթած ըլլալով՝ կէս օրին ճամբայ կիյնամ դէպի Լօնշան։ Օ՛, շողշողուն համազգեստներու, ոսկեզօծ ուսադիրներու եւ ցցունազարդ գըլ-

Դրանք ապրում են... աշխատում են մի կերպ գոնէ քարշ տալ իրանց թշուառ գոյութիւնը, բայց այնուամենայնիւ չեն կարողանում այնքան մնտեսել, որ ժամանակին կարողանան տան վարձը տալ։ Եւ ամսէ ամիս կուտակվում են ճակատագրական ռուբլիները։ Տան տէրը հանգստութիւն չէ տալիս. պայմանի համաձայն նա ամսէ ամիս պէտք է ստանայ։ Գնում, գալիս, բղաւում, սպառնում, հայհոյում է... ժամանակ անժամանակ ներս է ընկնում, տանու իրեղէնները դէս ու դէն շպրտում եւ վերջապէս ինչ կամենում, անում։ Կենդանների կողմից ոչ մի ընդդիմութիւն, ոչ մի հակաճառութիւն. խեղճութեան լեզուն կարճ է լինում. ինչ անեն. պարտք են, պէտք է տան, բայց չը կայ... հէնց այդ պատճառով էլ լռում, տանում են ոչ միայն այդ հայհոյանքները, այդ բաւիբօզուկային արարքը, այլ եւ պատրաստ են տանտիրոջ բոլոր քմահաճոյքներին բաւարարութիւն տալ, նրա կամքը կատարել, միայն թէ աղատվեն տան վարձ տալուց։ Եւ կատարում են։ Ցաճախ պատի գինն են վճարում, կրքերի՝ զոհեր նուիրում... Եւ քանի-քանի ընտանիքներ այսօր այդ վիճակին են մատնված, այդ միջոցին դատապարտված։ Ակներեւ փաստեր՝ որքան կամենաք։

Չարիքը մեծ է, հալածանքը զօրեղ։ Միամտութիւն կը լինէր, եթէ ենթադրվէր, թէ ռուբլիներ շպրտելով հնարաւորութիւն կը լինէր այդ ուժեղ հնանքի առաջն առնել, աճող չքաւորութիւնը կանգ առնել տալ։ Անկասկած խնդրի հիմնական լուծումը պէտք է որոնել «հալածող հոսանքի» ծնունդ տուող պայմանների, հանգամանքների մէջ։ Ահա այդ պայմանները պէտք է բարեփոխել, այլապէս ռուբլիներով միմիայն տրված առօրեայ բարեգործութիւնները ոչ միայն չքաւորութեան ընդհանուր հոսանքի առաջը չեն կարող առնել, այլ նոյն իսկ յաճախ նպաստաւոր հող կարող են ներկայացնել։

Փոխանակ չքաւորին ողորմութիւն տալու, իրան իր աչքում գցելու, նրան ընտելացնելու նպաստ, փող ընդունելուն՝ առանց իրա կողմից որ եւ է ծառայութիւն մատուցանելու (խօսքս անդամալոյծների, անկեալների եւ հաշմանդամների, եւ առհասարակ աշխատանքի անընդունակների մասին չէ) փոխանակ նրան սովորեցնելու «ձեռք մեկնելու», ամօթի զգացմունքը, ինքնասիրութիւնը մեռցնելու, պէտք է նրան տալ այն, ինչ որ ինքը չէ կարողանում ձեռք բերել, պէտք է նրա ընդունակութիւնների, նրա այս կամ այն կարողութեան համաձայն հնարաւորութիւն տալ, որ նա իր ոյժերով, իր գործ դրած ջանքով, իրաւունքով նոյն իսկ, կարողանայ ստանալ ոչ միայն այն, ինչ որ ստանում է ողորմութեամբ այլ այնքան, որքան ներում են նրա ոյժերը։

Ահա այս տեսակէտից նայելով գործին, Մարդասիրական ընկերութեան վարչութիւնը ձգտում է, որքան հնարաւոր է, մինչեւ այժմ տեղի ունեցող դրամական օժանդակութիւնը ձեւակերպել վերոյիշեալ նպատակայարմար եղանակով։ Այդ դիտաւորութեամբ նա բացել է «աշխատանքի տուն» անցած յունիսի 1-ից. դրա համար նա վարձել է փառաւոր մի շինութիւն երեք տարի ժամանակով։ Շինութիւնը գտնվում է Верхне-Пріютская փողոցում։ «Աշխատանքի տունը» կառավարվում է առանձին մասնաժողովով՝ բաղկացած մի խումբ տիկիններից, օրիորդներից եւ պարոններից։ Մասնաժողովի նախագահն է երդուեալ հաւատարմատար Ս. Ցարութիւնեան, փոխ-նախագահ՝ տիկին Եղ. Սարգսեան, քարտուղար՝ տ. Եղ. Իւզբաշեան։

Որոշված է առ այժմ մտցնել տղամարդկանց բաժնում ա) հիւսնութիւն՝ արկղներ, տաբուրետկաներ, տախտեր շինելու համար. բ) հին թոկերից պակլի պատրաստել եւ կեղտոտները մաքրել տալ։ Կանանց բաժնում՝ հասարակ սպիտակեղէններ կարել տալ եւ բրդէ բարձեր, վերմակներ ու դօշակներ շինել տալ։ Մանկական բաժնում՝ աթոռների, կողովների եւ գլխարկների համար յարդեայ գործուածներ, թղթէ քսակներ եւ գրքեր կազմել տալ։

Որոշված է վարձատրել տղամարդկանցից վարպետներին եւ նրանց օգնականներին օրական 70 կ. մինչեւ 1 ր., պատահական բանուորներին օրական 20—30 կ. եւ ձրի ճաշ, նոր սովորողներին՝ մինչեւ 20 կ. վարձատրութիւն եւ ճաշ։ Կանանց՝ գիշերվայ մի զոյգ սպիտակեղէններ կարելու համար 15 կոպէկ։ Տղաներին—օրական 10—15 կոպ. եւ ճաշ։

Աժառվայ ընթացքում պարապելու ժամերը այսպէս են որոշված. առաւօտեան 6—8 ժամ., յետոյ 8½—12 ժամ. ճաշից յետոյ 3—6 ժամ երեկոյեան։

Առ այժմ ձեռնարկածները սրանք են։ Առաջիկայ սեպտեմբերից գործը աւելի լայն ծաւալ կը ստանայ։ Երեխաներով ծանրաբեռնված կանանց տրվում է գործ տանը կատարելու։ Գործը ձեռնարկված է եռանդով եւ յոյս կայ, որ այդ «աշխատանքի տունը» մեծ ծառայութիւն մատուցանէ իսկական մարդասիրական գործին։ Ընդունելութիւնը սկված է արդէն. աշխատում են 15 տղաներ եւ 8—10 կանայք։ Ընդունելութիւնը տեղի է ունենում ամենայն օր։

Ն. Դաւթեան

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

—

Յուլիսի 12-ին

Այսօր, ցերեկվայ ժամը 11½-ին, պայթումի մի զարհուրելի ձայն լսվեց, որին հետեւեց եւ ամբողջ շինութիւնների շարժվելը ու ապակիների ջարդ ու փշուր լինելը. սարսափելի էր առաջին վայրկեանների տպաւորութիւնը. կարծեցինք թէ ամբողջ քաղաքը քարուքանդ եղաւ։ Եւ որովհետեւ պայթումի ձայնը, որին յաջորդեց եւ քարերի ու երկաթի ահագին կտորտանքների կարկուտի պէս տեղալը, լսվեց քաղաքի հիւսիսային կողմից, դրա համար էլ թէ խանութներից եւ թէ տներից դուրս թափված սարսափահար ամբոխը սկսեց փախչել դէպի հարաւ։ Երբ պայթումի ձայները դադարեցին (երկու անգամ լսվեցին իրար ետեւից), եւ դրա հետ վերջ տրվեց քարի ու երկաթի կտորտանքների թափվելուն, ամբոխը կանգ առաւ ու մէկ էլ հետաքրքրութեան համար սկսեց յետ վազել դէպի այն կողմը, որ կողմից լսվեց ձայնը։

Ցետ դարձանք, բայց ինչ տեսանք՝ սարսափելի տեսարան։ Քաղաքի հիւսիսային կողմում գտնվող «Բուռուն-Թաբիէ» կոչված ամրութիւնների դինամիտային պահեստը պայթել եւ զարհուրելի տեսարան է ներկայացնում իր չորս կողմը։ Մօտիկ շինութիւնների մեծ մասը ջարդ ու փշուր է եղել։ Մարդկանց դիակների (անշուշտ զինուորների) այրված կտորտանքները ահագին հեռաւորութեան վրա թափված են այս ու այն կողմերում՝ մեծ մասամբ ուռաց եկեղեցու հրապարակում։ Մօտիկ շինութիւններից, ուր ապրում էին մեծ մասամբ զինուորականներ, դուրս են բերում օֆիցէրներին արդէն մահացած եւ վիրաւոր երեխաների, նոյնպէս եւ զինուորների ու կրում դէպի հիւանդանոց։ Աւելի մօտիկ, ուր դէպքը տեղի է ունեցել, մեծ է զոհերի թիւը։ Կառքերը իրար ետեւից կրում են դէպի հիւանդանոց թէ սպանված եւ թէ վիրաւոր զինուորների։ Այդ դեռ բաւական չէ, ինչպէս պատմում են, մօտ 12 զինուոր, մի կապիտան եւ երկու օֆիցէր էլ դեռ փլուածքի տակ են մնացած, որը սկսել են փորել։ Բացի փլուածքի տակը մնացածներից, որոնց թիւը յայտնի չէ, սպանվածների թիւը առ այժմ մօտաւորապէս 20 է հաշուում, իսկ վիրաւորվածներինը—մօտ 50, որոնց թւում եւ մի քանի օֆիցէրներ։ Սպանված է նաեւ նուագախմբի գլխաւորը։ Պատմում են, որ, բարեբաղդաբար, զինուորների մեծ մասը այդ միջոցին հեռացրված են եղել զբաղմունքից եւ ուղարկված ճաշելու, եթէ ոչ աւելի մեծ չափով զոհեր պիտի տեղի ունենային։

Ինչպէս ասացինք պայթիւնը ոչ սակաւ վնաս պատճառեց նաեւ քաղաքին։ Գրեթէ քաղաքի մեծ մասի շինութիւնների ապակիները ջարդված են. հեռագրական, հեռախօսի եւ էլէքտրական լուսաւորութեան թելերը եւ մի քանի սիւներ կտորտված եւ ջարդված են։ Շինութիւններից նոյնպէս շատ կան վնասված։ Ամենաերկիւղալին այն է, որ մօտիկ քարաշէն բարձր շինութիւնները կարող են այդ ցնցումից վնասված լինել եւ յետագայ փորձնական թնդանօթաձգութիւններից քանդվելով նոր դժբաղդութիւններ առաջ բերել։

Գ. Գրիգորեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կովկասեան ցուցահանդէսի բիւրօն կիրակի, յուլիսի 15-ին, Գիւղատնտեսական ընկերութեան շինութիւնից տեղափոխվեց այգեպանական ուսումնարանի շինութիւնը։

—

Լ. Տօլստոյի հիւանդութիւնը շարունակում է զբաղեցնել լրագիրներին։ Բժիշկները տարբեր կարծիքներ են յայտնում հռչակաւոր հեղինակի հիւանդութեան մասին։ Ասում են, թէ Լ. Տօլստոյ, որ առհասարակ շատ քիչ է հաւատում բժշկականութեան եւ միմիայն հարազատների թախանձանքի շնորհիւ է համաձայնում բժշկվել, լսելով բժիշկների տարբեր կարծիքները իր այժմեան տկարութեան մասին, նկատել է, թէ բժիշկները հիանալի մարդիկ են եւ գիտեն այն բոլորը, ինչ որ սովորեցնում է նրանց բժշկական գիտութիւնը, բայց ինքը՝ բժշկականութիւնը ոչինչ չը գիտէ։ Տօլստոյ շատ փիլիսոփայաբար է վերաբերվում իր վիճակին. զգալով, որ դրութիւնը ծանրանում է եւ մի ոտը գերեզմանումն է, նա ասել է մերձաւորներից մէկին. «կառքը բերել են, պէտք է ճանապարհ ընկնել», իսկ երբ առողջութիւնը սկսել է դէպի լաւը գնալ, ասել է. «ուղեւորութիւնս յետաձգել են»։

—

Կարգադրված է գիւղացիների գոյքը արքունական ապառիկների վճարման համար ծախելու ժամանակ՝ անձեռնմխելի թողնել մի աքաղաղ եւ հինգ հաւ։ Այս կարգադրութիւնը տեղի է ունեցել շնորհիւ ռուսական հաւապահական ընկերութիւններից մէկի միջնորդութեան։

—

Առաջիկայ աշնանը Պետերբուրգում կը բացվի հնութեան իրերի բիւրօ, որտեղ մասնագէտ անձինք փոքր վարձատրութեամբ քննութեան կենթարկեն բիւրօյին ներկայացրած հնութեան իրերը եւ կորոշեն նրանց գինն ու արժանաւորութիւնը։ Որպէս գլխաւոր գնահատող արդէն հրաւիրված է մի մասնագէտ։

—

«Вѣстникъ горнаго дѣла и орошенія на Кавказѣ» թերթը հաղորդում է, թէ Գօմբորի լեռնաշղթայից ոչ հեռու գտնված նաւթային հողերի մասին տարածված յամառ լուրերը հաստատվեցին ֆրանսիական մի ընկերութեան կողմից կատարված հետազօտութիւններով։ Այդ հետազօտութիւնները ապացուցեցին, որ Գօմբորի անտառների մի քանի մասերում գոյութիւն ունեն նաւթաբեր հողեր։ Այժմ, տեղական բնակիչների ասելով, ֆրանսիական ընկերութիւնը սկսել է մաքրել նաւթաբեր հողաբաժինները եւ ժամանակաւոր բնակարաններ շինել բանուորների համար։ Մատդրութիւն կայ շուտով ձեռնամուխ լինելու նաւթահորեր փորելուն։ Դրա հետ միասին Գօմբորի լեռնաշղթայի ոտորոտում, համարեա գետնի երեսին, գտնված են քարածուխի հաստ շերտեր։

—

Պետական քաղաքացիական ծառայութեան վերաբերմամբ կազմված նոր օրինագծով՝ պետական ծառայութեան մէջ կարող են մտնել բացառապէս բարձրագոյն ուսում ստացած անձինք, իսկ եթէ այդպիսիների թիւը բաւարար չի լինի, այն ժամանակ կընդունվեն եւ միջնակարգ կրթութիւն ստացած կամ համապատասխան շնորհիւն տուած անձինք։

—

Երկրագործութեան մինիստրութիւնը թոյլ տուեց ռուսական մեղուապահական ընկերութեան Գ. Լուբէի, ամբոխը կանգ առաւ ու մէկ էլ հետաքրքրութեան համար սկսեց յետ վազել դէպի այն կողմը, որ կողմից լսվեց ձայնը։

Ցետ դարձանք, բայց ինչ տեսանք՝ սարսափելի տեսարան։ Քաղաքի հիւսիսային կողմում գտնվող «Բուռուն-Թաբիէ» կոչված ամրութիւնների դինամիտային պահեստը պայթել եւ զարհուրելի տեսարան է ներկայացնում իր չորս կողմը։ Մօտիկ շինութիւնների մեծ մասը ջարդ ու փշուր է եղել։ Մարդկանց դիակների (անշուշտ զինուորների) այրված կտորտանքները ահագին հեռաւորութեան վրա թափված են այս ու այն կողմերում՝ մեծ մասամբ ուռաց եկեղեցու հրապարակում։ Մօտիկ շինութիւններից, ուր ապրում էին մեծ մասամբ զինուորականներ, դուրս են բերում օֆիցէրներին արդէն մահացած եւ վիրաւոր երեխաների, նոյնպէս եւ զինուորների ու կրում դէպի հիւանդանոց։ Աւելի մօտիկ, ուր դէպքը տեղի է ունեցել, մեծ է զոհերի թիւը։ Կառքերը իրար ետեւից կրում են դէպի հիւանդանոց թէ սպանված եւ թէ վիրաւոր զինուորների։ Այդ դեռ բաւական չէ, ինչպէս պատմում են, մօտ 12 զինուոր, մի կապիտան եւ երկու օֆիցէր էլ դեռ փլուածքի տակ են մնացած, որը սկսել են փորել։ Բացի փլուածքի տակը մնացածներից, որոնց թիւը յայտնի չէ, սպանվածների թիւը առ այժմ մօտաւորապէս 20 է հաշուում, իսկ վիրաւորվածներինը—մօտ 50, որոնց թւում եւ մի քանի օֆիցէրներ։ Սպանված է նաեւ նուագախմբի գլխաւորը։ Պատմում են, որ, բարեբաղդաբար, զինուորների մեծ մասը այդ միջոցին հեռացրված են եղել զբաղմունքից եւ ուղարկված ճաշելու, եթէ ոչ աւելի մեծ չափով զոհեր պիտի տեղի ունենային։

Ինչպէս ասացինք պայթիւնը ոչ սակաւ վնաս պատճառեց նաեւ քաղաքին։ Գրեթէ քաղաքի մեծ մասի շինութիւնների ապակիները ջարդված են. հեռագրական, հեռախօսի եւ էլէքտրական լուսաւորութեան թելերը եւ մի քանի սիւներ կտորտված եւ ջարդված են։ Շինութիւններից նոյնպէս շատ կան վնասված։ Ամենաերկիւղալին այն է, որ մօտիկ քարաշէն բարձր շինութիւնները կարող են այդ ցնցումից վնասված լինել եւ յետագայ փորձնական թնդանօթաձգութիւններից քանդվելով նոր դժբաղդութիւններ առաջ բերել։

Գ. Գրիգորեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կովկասեան ցուցահանդէսի բիւրօն կիրակի, յուլիսի 15-ին, Գիւղատնտեսական ընկերութեան շինութիւնից տեղափոխվեց այգեպանական ուսումնարանի շինութիւնը։

—

Լ. Տօլստոյի հիւանդութիւնը շարունակում է զբաղեցնել լրագիրներին։ Բժիշկները տարբեր կարծիքներ են յայտնում հռչակաւոր հեղինակի հիւանդութեան մասին։ Ասում են, թէ Լ. Տօլստոյ, որ առհասարակ շատ քիչ է հաւատում բժշկականութեան եւ միմիայն հարազատների թախանձանքի շնորհիւ է համաձայնում բժշկվել, լսելով բժիշկների տարբեր կարծիքները իր այժմեան տկարութեան մասին, նկատել է, թէ բժիշկները հիանալի մարդիկ են եւ գիտեն այն բոլորը, ինչ որ սովորեցնում է նրանց բժշկական գիտութիւնը, բայց ինքը՝ բժշկականութիւնը ոչինչ չը գիտէ։ Տօլստոյ շատ փիլիսոփայաբար է վերաբերվում իր վիճակին. զգալով, որ դրութիւնը ծանրանում է եւ մի ոտը գերեզմանումն է, նա ասել է մերձաւորներից մէկին. «կառքը բերել են, պէտք է ճանապարհ ընկնել», իսկ երբ առողջութիւնը սկսել է դէպի լաւը գնալ, ասել է. «ուղեւորութիւնս յետաձգել են»։

—

Կարգադրված է գիւղացիների գոյքը արքունական ապառիկների վճարման համար ծախելու ժամանակ՝ անձեռնմխելի թողնել մի աքաղաղ եւ հինգ հաւ։ Այս կարգադրութիւնը տեղի է ունեցել շնորհիւ ռուսական հաւապահական ընկերութիւններից մէկի միջնորդութեան։

—

Առաջիկայ աշնանը Պետերբուրգում կը բացվի հնութեան իրերի բիւրօ, որտեղ մասնագէտ անձինք փոքր վարձատրութեամբ քննութեան կենթարկեն բիւրօյին ներկայացրած հնութեան իրերը եւ կորոշեն նրանց գինն ու արժանաւորութիւնը։ Որպէս գլխաւոր գնահատող արդէն հրաւիրված է մի մասնագէտ։

—

«Вѣстникъ горнаго дѣла и орошенія на Кавказѣ» թերթը հաղորդում է, թէ Գօմբորի լեռնաշղթայից ոչ հեռու գտնված նաւթային հողերի մասին տարածված յամառ լուրերը հաստատվեցին ֆրանսիական մի ընկերութեան կողմից կատարված հետազօտութիւններով։ Այդ հետազօտութիւնները ապացուցեցին, որ Գօմբորի անտառների մի քանի մասերում գոյութիւն ունեն նաւթաբեր հողեր։ Այժմ, տեղական բնակիչների ասելով, ֆրանսիական ընկերութիւնը սկսել է մաքրել նաւթաբեր հողաբաժինները եւ ժամանակաւոր բնակարաններ շինել բանուորների համար։ Մատդրութիւն կայ շուտով ձեռնամուխ լինելու նաւթահորեր փորելուն։ Դրա հետ միասին Գօմբորի լեռնաշղթայի ոտորոտում, համարեա գետնի երեսին, գտնված են քարածուխի հաստ շերտեր։

—

Պետական քաղաքացիական ծառայութեան վերաբերմամբ կազմված նոր օրինագծով՝ պետական ծառայութեան մէջ կարող են մտնել բացառապէս բարձրագոյն ուսում ստացած անձինք, իսկ եթէ այդպիսիների թիւը բաւարար չի լինի, այն ժամանակ կընդունվեն եւ միջնակարգ կրթութիւն ստացած կամ համապատասխան շնորհիւն տուած անձինք։

—

Երկրագործութեան մինիստրութիւնը թոյլ տուեց ռուսական մեղուապահական ընկերու-

---

խարկներու հրապոյրը չէ, որ զիս դէպի զօրահանդէս կը մղէ։ Կուզեմ աչքովս տեսնել ու ձեզի զգայնութիւնը տալ բոլոր անցած դարձածին։

Ժամը երկուքին մօտ է, երբ կը հասնեմ Լոնչան։ Երկու սեռէ ու ամեն տարիքէ բազմութիւն մը եռ կուգայ հանդիսավայրին շրջակայքը։ Հետզհետէ իրենց զօրանոցներէն հանող զօրախումբերուն աղմուկը, ամեն տեսակ ուտելեղէն ու խմելիք ծախողներու աղաղակին հետ անօրինակ ժխորով մը կը լեցնէ մթնոլորտը։ Ընտանիքներ՝ կանաչներու վրա փռված իրենց կէս օրվան ճաշը կաւարտեն։ Երբեմն գումարտակի մը ընկերացող փողին ու թմբուկին ձայնը զիրենք իրենց տեղէն վեր կը ցատկեցնէ՝ դիտելու համար զինուորներուն ու ժանաւանդ սպաներուն խրոխտ անցքը։ Արեւը թէպէտեւ քօղարկված՝ պահ առ պահ ամպերու պատռուածքներէն դուրս կուգայ ու իր կրակէ ալաքներուն խուրձը կը մխէ շոքէն ջարդէն չչված ամբոխին մարմնին մէջ։

Ոտքի վրա չը մնալու համար կաճապարեմ հանդէսի շրջափակէն ներս մտնել։ Անօգուտ, ոչ մէկ պարապ աթոռ կայ։ Կէս օրին բոլոր տեղերը արդէն բռնված են։ Զօրահանդէսը երեքին պիտի սկսի սակայն։ Ինչպէս միշտ, կիները մեծամասնութիւն կը կազմեն։ Մինչեւ սկսումը կրցածնուն չափ աղմուկ ու ժխոր կը հանեն։ Առջեւի կարգը գտնվողները, փոխանակ նստած մնալու իրենց աթոռներուն վրա, ոտքի կանգնած իրենց հեռադիտակները կուղղեն աջ ու ձախ։ Ետեւի հանդիսատեսները բան չեն տեսներ, կրսկսեն բողոքել։ Բայց կարելի է դիւրութեամբ խօսք հասկցնել։ Ու դժոխային չփոթութիւն մըն է ծայր կուտայ։ Կծու յանդիմանութիւնները հայհոյութեան կը փոխվեն։ Վերջին կարգը եղողները ճարահատ՝ ուժգին միջոցներու կը դիմեն. ափերով աւազ ու գայլախազի հատիկներ վերցնելով գետնէն՝ կը շպրտեն խանգարողներու գլխին, որոնք կը հարկադրվեն կամայ ակամայ նստել։

Ժամը 3-ը 6 վայրկեան անցած է, երբ թնդանօթի քանի մը հարուած՝ հանրապետութեան նախագահին ժամանումը կաւետեն։ Պ. Լուբէ, մեր գլխուն վերեւ, ամպհովանիի մը տակ կը թառի։ Իր երեւումը զանազան ցոյցերու առիթը կը հայթայթէ. հանրապետականները «vive la République! vive Loubet!» աղաղակներով կընդունեն զինքը, մինչդեռ ազգայնականները կըսկսեն «vive l'armée» ոռնալ։ Այս պարագային «կեցցէ բանակը» աղաղակը՝ կը նշանակէ «անկցի հանրապետութիւնը, անկցի Լուբէն»։ Ազգայնականները շատ խելացի մարդիկ են. երբ վստահ ըլլան, որ իրենց խօսքերուն եւ կամ իրենց արարքներուն ծայրը վնաս մը կայ իրենց անձին համար, անմիջապէս կը խելօքնան։ Որովհետեւ «անկցի Լուբէ» աղաղակը կրնայ իրենց գլխուն փորձանք բերել, «կեցցէ բանակը» ով կը գոհանան, ինչպէս առաուն գոհացած էին Ստրազբուրգ քաղաքին տեղ, Ստրազբուրգի արձանին գրաւումով։

Զօրահանդէսը կըսկսի։ Զօրքերը երեք կարգի շարված են. զինուորական Սէն-Սիր, բոլիթէքնիկ վարժարաններու աշակերտները առաջին, հետիոտն զօրքերը երկրորդ եւ հեծելազօրքը երրորդ կարգին վրա։ Զօրավար Անդրէ, պատերազմական նախարարը՝ զօրավար Ֆլորանթէնի՝ Պարիզի զինուորական կառավարչին՝ զօրավար Պանտրզէքի՝ սպայակոյտի պետին ու օտար զինուորական կցորդներու գլուխին անցած՝ բանակին առջեւէն ձիով քառամբակ կարշաւէ։

Զօրահանդէսը արդէն աւարտած է։ Հիմա պէտք է զինուորները կարգով անցնեն պ. Լուբէի աչքին տակէ։ Ամեն պաշտօնական արարողութիւններու մէջ անխուսափելի գործողութիւնը՝ կարգ մը պատուանշաններու առոր անոր ցրուումը կատարելէ յետոյ, զօրքերու անցքը կըսկսի։

Իրենց կարգով կուգան նախ վարժարաններու աշակերտները, հետիոտն զօրքերը անոնց ետեւէ. հեծելախումբը ամենէն ետք։

Բազմութիւնը կը ծափահարէ ամեն անգամ, երբ կարգերը կանցնեն շիր շիտակ դէմ վրա, ներդաշնակ։ Հեծելանիւի զինուորները ամենէն շատ կը ծափահարվին։ Հակառակ իրենց ծածանուտ գործիքին, շատերը կը յառաջանան անստգիտ կանոնաւորութեամբ։

Պ. Լուբէ իւրաքանչիւր դրօշակի անցքին առջեւ թեթեւ կերպով ոտքի կը կանգնի ու կը բարեւէ. իր քովը, բեմին վրա, կը գտնվին դեսպանները, տիկին Լուբէ, տիկին Պոլ Դէշանէլ, տիկին Վալդէկ-Ռուսսօ։ Տիկին Դէշանէլ ամենէն զուարթն է։ Արբշռութեամբ կը խորհի, թէ օր մը, երբ իր ամուսինը հանրապետութեան նախագահ ընտրվի, ինքը պիտի ըլլայ այսքան զօրքերուն եւ սպաներուն տիրուհին։

Ժամը 5-ն է, երբ ամեն բան կաւարտի։ Ամբոխը, հրդեհէ փախչելու պէս, դէպի դուռը կը վազէ։ Դուռը չքեղ կառքեր, հոյակապ լանդոներ կանգ առած են։ Օտար դեսպաններուն եւ զինուորական կցորդներուն համար է։ Իրենցմէ ամենէն խեղճուկն ու ծիծաղաշարժը Թիւրքիոյ դեսպանն է, որուն ֆէսը արիւնի տեսարանները խորհել կուտայ անմիջապէս։ Կառքին մէջ կը մտնէ շուտով ու գողի մը պէս կը փախչի բազմութեան արհամարհանքին մէջէն։

Ժամը 7-ն էր, երբ Քառթիէ Լաթէն հասայ։ Այնքան յոգնած էի հրմշտուկէն, ականջներս այնքան լեցուած էին անտանելի ժխորէն՝ որ իրիկուան՝ Պարիզի լուսավառումն ու խրախճանը դիտելու համար դուրս չելայ այլ եւս։ Եւ յետոյ ինչ հարկ կար, քանի որ մի եւ նոյն խելայեղ պարը, մի եւ նոյն խլացուցիչ երաժշտութիւնը ու մի եւ նոյն անգիտակից հրրհրճուանքն է, որ գիշերը կը ողողէր, կը յորդէր...

Տիգրան

թեան հրաւիրել մեղուապահների համառուսական ժողով։

—

Լեւ Տոլստոյի գրուածքները այժմ թարգմանված են գրեթէ բոլոր լեզուներով։ Ի միջի այլոց, 1895 թուին տպվել է նրա գրուածքների չինարէն թարգմանութիւնը։

—

Պետերբուրգի պարսկական դեսպան նշանակված է Միրզա-Հասան-Խան-Մուշիր-Օլ-Միւլք։ Նոր դեսպանը Մոսկվայի հաւալարանի սան է եւ նրա դասընթացքը աւարտել է մեծ աջողութեամբ։ Պարսկաստանում նա համարվում է իբրեւ ականաւոր դիպլոմատներից մէկը։

—

Ինչպէս հաղորդում է Տրիպոլիսի բելգիական հիւպատոսը, տեղական չուկայում ռուսական նաւթը դուրս է մղում ամերիկականը։ Երկու անգլիական ֆիրմաներ, որոնք վաճառում են ռուսական նաւթ եւ նաւթի ամբարներ ունեն Մալտա կղզում, համարեա ամբողջովին իրանց ձեռքն են գցել Տրիպոլիսի չուկան։

—

Շուտով Վաշինգտոնում լոյս կը տեսնի Մակսիմ Գորկիյի ընտրեալ գրուածքների անգլերէն թարգմանութիւնը։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը կարգադրել է թոյլ տալ քաղաքային երկդասարանեան ուսումնարաններն աւարտած աշակերտներին մտնելու գիմնազիաների եւ պրոգիմնազիաների առաջին դասարաններն առանց քննութեան այն դէպքում, երբ այդ դասարանը մտնել ցանկացողների թիւը աւելի չէ դասարանում եղած ազատ տեղերի թիւից։ Հակառակ դէպքում քաղաքային երկդասարանեան ուսումնարաններն աւարտածները պէտք է ընդունվեն մրցողական քննութեամբ։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Յուլիսի 10-ին հայ դերասանական ընկերութիւնը, ի նպաստ տիկին Արաքսեանի, խաղաց առաջին անգամ Շուշում «Ոսկու ստրուկներ» դրամն, 4 գործ. հեղ. Ազօվի, որը բաւական աջող թարգմանել է պ. Արաքսեան։ Թատրոնը համարեա թէ լի էր։ Այսօր, յուլիսի 12-ին, Խանդամիրեանի թատրոնում աշըղային խումբը տալիս է համերգ։ Խումբը բաղկացած է 40 հոգուց»։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Լսում ենք, որ մեր գաւառի Կարզախ գիւղում, որ ազատ է մնացել տեղական աղէտներից, գիւղացիները հացահատիկ են հաւաքել՝ անբերրիութիւնից վնասված Զանգեզուրա գիւղի կարօտ ընտանիքներին բաժանելու համար։ Այդ գեղեցիկ գործի սկզբնապատճառը տեղական երկու քահանաներն են եղել, այն է Տէր-Կարապետ Ղազարեանը եւ Տէր-Մարտիրոս Աբովեանը։ Այստեղ շատ գիւղերում սովորութիւն կայ, որ Զատկից յետոյ իւրաքանչիւր կիւրակի գիւղացիները հերթով պատարագ են անել տալիս եւ ազատ հոգեհաց են տալիս քահանաներին ու ժողովրդին, որ բաւական ծախս է նստում։ Անցեալ Զատկին Կարզախի համակրելի քահանաները քարոզել են ժողովրդին, որ հոգեհացի սովորութիւնը վերջացնեն եւ փոխարէնը՝ անբերրիութիւնից վնասված իրանց հարեւանների համար հացահատիկ տան. այդ գեղեցիկ միտքը համակրութեամբ է ընդունվել գիւղացիների կողմից, եւ մինչեւ հիմա բաւականաչափ հացահատիկ է հաւաքվել, որ եւ մտադիր են նուիրել չանդուրացիներին։ Առիթ եմ համարում այստեղ վկայելու, որ այդ երկու քահանաները՝ մեր մէջ հազուագիւտ եւ օրինակելի՝ հաւերաչխութեամբ են վարում իրանց հովուական պաշտօնը. դանձանակից եւ եկեղեցական զանազան օրինակատարութիւններից ստացված արդիւնքը հաւասար չափով բաժանում են միմեանց հետ, գիւղացիների հետ սակարկութեան փոքրիկ ակնարկ անգամ չեն անում վարձատրութեան մասին եւ երբէք դժգոհութիւն չեն յայտնում, որով մեծ յարգանք են ձեռք բերել ժողովրդի աչքում. եւ որ գլխաւորն է՝ այդ բանը նրանք իրագործել են առանց աղմուկի, առանց թմբկահարութեան։—Բացի դրանից՝ կարապետ քահանայի շնորհիւ է, որ տեղական ընթերցող երիտասարդները հաւաքական ուժերով «Մշակ» են ստանում, այդ երկու քահանաներն են բժշկապետ Վ. Արծրունու «Մի խմիր» եւ «Վատ ցաւ» բրոշիւրներից բերել տուել եւ բաժանել թէ Կարզախում եւ թէ շրջակայ գիւղերում։ Գովելով այդ երկու յարգելի գիւղական քահանաների բռնած դիրքը եւ ընթացքը դէպի իրանց հօտի եւ մերձաւորի մտաւոր—բարոյական շահերը եւ նիւթական անուշդը, կը ցանկայինք, որ դրանք գեղեցիկ բացառութիւն չը մնան, այլ հետեւողներ ունենան մեր գաւառի բազմաթիւ հայ գիւղերի եւ քաղաքի քահանաների մէջ, այո, նաեւ քաղաքի քահանաների եւ աւագ-քահանաների մէջ,—մենք չեշտում ենք այս վերջինների վրա»։

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 7-ին Խաչվազ կայարանում մի կատաղի շուն կծում է վեց մարդու, որոնք ծառայում են երկաթուղու վարչութեան մէջ. խածվածներից մէկը՝ ինժենէր Կրէսլէրն է. նրանց բոլորին էլ պետական հաշուով ուղարկեցին յուլիսի 10-ին Թիֆլիսի Բուժարանը։ Դժբաղդները ոչինչ չը կարծելով՝ խաղում են շան հետ, բայց նա կատաղում է եւ կծում է նրանց, ինքն էլ սատկում է միւս օրը. շան դիակը բերին Ղուբա բժշկական քննութեան ենթարկելու»։

—

ԳՕՐՈՒՑ մեզ գրում են. «Մեր գերեզմանատունը շատ անմխիթար դրութեան մէջ է. չորս բոլորը բաց է, ոչ ցանկապատ ունի, ոչ առու է փորած եւ ոչ էլ պահապան կայ, այնպէս որ գերեզմանատունը ոչ մի բանով չի զանազանվում շրջակայ դաշտերից։ Քաղաքի կովերը եւ գոմէշները ամբողջ օրը մեն են գալիս մէջը, ապականելով գերեզմանների վրայի քարերը եւ ոչնչացնելով գերեզմանատանը եղած մէկ քանի արձանները. հարիւրներով ոչխարներ արածում են մէջը. գիւղացիները սայլերով աղ ու ձախ անց ու դարձ են անում, քարերը դէս ու դէն գլորելով։ Դեռ այս բոլորը ոչինչ. հիմա էլ գտնվել են այնպիսի զգայունքը քարացած մարդիկ, որոնք օգտվելով մեր հապարակութեան եւ հոգեւոր իշխանութեան թուլութիւնից, գերեզմանատանը աղիւսանոցներ են շինում, փորելով տաներեակ գերեզմաններ եւ մեռելների ոսկորները թափելով ոտքի տակ։ Զը նայելով որ այս մասին մարմնաւոր իշխանութիւնը իր ժամանակին արձանագրութիւն կազմեց եւ աղիւսանոց չինող պարոնին պատասխանատուութեան ենթարկեց, բայց եւ այնպէս նա շարունակում է իր գործը անդադար»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻԶՄԻՐԼԵԱՆ ՄՐՑԱՆԱԿ

—

«Մասիս» շաբաթաթերթը հաղորդում է.

«Տ. Իզմիրեանց մրցանակաբաշխութիւնը, թէեւ 1899-էն ի վեր չէ կատարուած, նորութեան մը, անակնկալի հրապոյր չի պահեր իր մէջ։ Շաբաթներ առաջ հրատարակուեցան թէ քանի մրցանակ պիտի տրուի եւ որոնց։

Վերջին երկու տարիներու միջոցին ընդամենը տաներկու գործ ներկայացուած է. 1) Գիւտ քահանայ Աղանեանցի «Դիւանի» Դ. գիրքը (1780-էն 1800), որ կը վերաբերի Ղուկաս կաթողիկոսին։ 2) Վրթ. Փափազեանի «Հայ բոշաներ», ազգագրական ուսումնասիրութիւն։ 3) Վահան Բժշկեանի «Ուսումնասիրութիւն Շարականաց»։ 4) Յով. Գազանճեանի «Նէոգոկիոյ հայոց գաւառաքարքաղը» 5) Նազար Գորոյեանցի «Պարսկաստանի հայերը»։ 6) Յարութիւն Մրմրեանի «Հին օրեր եւ այդ օրերու Ամիրաները»։ 7) Հ. Գրիգոր վարդապետ Գուլրիկեանի «Հայք յԵղիսաբեթուպոլիս», հատոր Բ։ 8) Ներսէս քահանայ Խամազեանցի «Հաւառօտ քարոզներ»։ 9) Տիգրան Ս. Քիրիշեանի (Սեբաստիայէն) «Մանաւոր պատմագրութիւն Ս. Նշանի վանուց Սեբաստիոյ»։ 10) Տ. Սմբատ վարդապետ Սատէթեանի (Շ. Գարահիսարէն) «Ս. Ներսէս Լամբրոնացին»։ 11) Երուանդ Լալայեանց «Գանձակի գաւառը»։ 12) Սուքիաս վարդապետ Պարոնեանի պատրաստած մէկ ցանկը՝ օտարալեզու երկասիրութեանց վրա։

Այս 12 երկասիրութիւններէն 3-ը—«Գանձակի գաւառ» Պ. Լալայեանի եւ «Պարսկաստանի հայերը» Պ. Նազար Գորոեանցի—կը ստանան 30-ական ոսկի մրցանակ, իսկ 10-ական ոսկի կը տրուի «առ ի քաջալերութիւն» Պ. Պ. Յովհաննէս Գազանճեանի եւ Վահան Բժշկեանի։

Երկու տարվան մրցանակներուն համար տրամադրելի գումարը ըլլալով 120 ոսկի, անշուշտ Յանձնաժողովը բանաւոր մտածում մը ունեցեր է 40 ոսկիի խնայողութիւն մը ընելու համար»։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Новое Время» հաղորդում է, որ երբ Մեծ-Իշխան Ալէքսանդր Միխայլովիչ Նորերս Բուրգասում բոլգարական գնդերի զօրահանդէսի ժամանակ գովեց զինուորներին բոլգարերէն լեզուով, զինուորները ռուսերէն պատասխանեցին. «Рады стараться, Ваше Императорское Высочество»։ Օֆիցէրների ժողովարանում կայացած ճաշկերոյթից յետոյ բոլգարների ոգեւորութիւնը եւ ցնծութիւնը այն աստիճանին էր հասել, որ ժողովարանի առաջ, փողոցում, եւ ժողովարանի դահլիճում խմբերով պարում էին ժողովրդական «խորո» պարը, որին մասնակցում էին եւ տղամարդիկ, եւ կանայք, եւ երեխաներ, քաղաքացիներ եւ գիւղացիներ, բոլգարական իշխանը, մինիստրները եւ ուրիշ բարձրաստիճան պաշտօնեաներ։

—Տրանսվաալում նախագահ Կրիւգէրի ժառանգաւոր տեղապահ Շալկ-Բուրգէր, «Morning Poste»-ի ասելով, հրաման է հրատարակել, որով զէնքի են կանչվում բոլոր 14-ամեայ բօէրները։

—«Inf» լրագիրը հաղորդում է իբր հաստատ լուր, թէ յունաց Գէօրգ թագաւորը սեպտեմբերին գնալու է Կ. Պոլիս անձամբ բանակցելու սուլթանի հետ յոյն—թիւրքական համաձայնութեան մասին, որ վերաբերվելու է ոչ միայն Կրէտէին, այլ եւ Մակեդոնիային։

—«Magyar Orszag» լրագիրը հաղորդում է մի նշանաւոր լուր, թէ իբր աւստրիական գլխաւոր շտաբի կառավարիչ բարոն Բէկի Բուխարէստում եղած ժամանակ՝ Ռումինիայի եւ Աւստրիայի մէջ կապված է զինուորական դաշնադրութիւն։ Այս դաշնադրութեան զօրութեամբ՝ Աւստրո-Ունգարիայի եւ Ռուսաստանի մէջ ծագած պատերազմի դէպքում, Ռումինիան պարտաւորվում է ուղարկել պատերազմի դաշտը, դէպի Գալաց-Եասսի գիծը, 250,000 զինուոր։ Այս զօրքի գործը պէտք է լինի ջլատել Օդէսայի եւ Սիմֆերօպոլի զինուորական շրջանների զօրքի ոյժը եւ թոյլ չը տալ, որ նրանք միանան Կիեւի զինուորական շրջանի զօրքերի հետ, որոնք պէտք է գործեն Աւստրիայի դէմ։ Ռումինական մնացեալ զօրքերը պէտք է ուղարկվեն դէպի Դունայ Բոլգարիայի դէմ, իսկ Սերբիայի դէմ դէպի Դունայ կուղարկվի աւստրո-ունգարական մի կօրպուս։ Ունգարական լրագիրը դրականապէս հաւատացնում է, որ նրա հաղորդած տեղեկութիւնը ճիշտ է եւ թէ աւստրո-ռումինական դաշնադրութեան շարժառիթն եղել են Ռուսաստանի հովանաւորութեամբ բալկանեան սլաւօնական պետութիւններից կազմվող ֆեդերացիայի մասին ստացված տեղեկութիւնները։

—Վերջապէս անգլիական զինուորական թղթակիցներն եւս զայրացան այն ցենզուրական խստութիւններից, որոնք գործ են դրվում հարաւային Աֆրիկայում, եւ այժմ յայտնում են, որ «Կիտչենեռեան մեթոդը ցենզուրայի ենթարկելու պատերազմի դաշտից հաղորդված տեղեկութիւնները ոչ միայն հնացել է, այլ եւ հակառակ է քրիստոնական ժողովրդի ամենասրբազան սկզբունքներին եւ շահերին»։ Թղթակիցները պնդում են, թէ պէտք է վերացնել ցենզուրական այն բոլոր խստութիւնները, որոնք թոյլ չեն տալիս շատ բան հաղորդելու մամուլին։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Բուդապէշտում 1893 թուից գոյութիւն ունի աշխարհիս միակ «Հեռախօսական լրագիրը» կամ, աւելի ճիշդ ասած, «Լրախօսը», որ ոչ թէ տպում է լուրերը, այլ հաղորդում է իր բաժանորդներին հեռախօսով։ Այդ «Լրախօսը» կոչվում է „Telephon-Hirmonde“։ Սկզբում նա ունէր 2,000 բաժանորդ-ունկնդիր։ Իսկ այժմ նա ունի 20,000 բաժանորդ։ Բաժանորդագինը ամսական մօտ մի բուբլի է։ Լրագրի բովանդակութիւնը հաղորդվում է օրը մի քանի անգամ և իւրաքանչիւր բաժանորդ կարող է ընտրել իր ուզած ժամերը։ Երբ խմբագրութիւնը ցնցող լուր է ստանում, բաժանորդներին իսկոյն իմաց է տրվում ազդանշանով։

*

Ռումինիայի թագուհին, որ յայտնի է գրականութեան մէջ «Կարմէն Սիլվա» կեղծանունով, միջոցներ է ձեռք առնում զարգացնելու գիւղացիների համար տրվող թատրոնական ներկայացումների գործը, նկատի ունենալով նրանց կրթիչ և բարոյապէս առողջարար ազդեցութիւնը։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

14 յուլիսի

ԲԵՐԼԻՆ։ Մաքսային նոր տարիֆով, մաքսի ենթակայ ապրանքները այն պետութիւններից, որոնք վերաբերվում են գերմանական նաւերին եւ գերմանական ապրանքներին ոչ այնպէս բարեհաճ, ինչպէս միւս պետութիւնների ապրանքներին եւ նաւերին, կարող են, բացի տարիֆով որոշված տուրքերից, ենթարկվել նաեւ մաքսային լրացուցիչ տուրքի՝ նախապէս նրանց համար նշանակված մաքսի կամ իրանց ամբողջ արժէքի չափով։ Մաքսից ազատ ապրանքները այսպիսի դէպքերում կարող են ենթարկվել տուրքի իրանց արժէքի կէսի չափով։ Այս միջոցները հաստատվում են դաշնակցական խորհրդի կողմից եւ ժամանակաւորապէս կայսերական հրամանով, որից յետոյ ներկայացվում են պետական սէյմի հաստատութեանը, եւ կորցնում են իրանց ոյժը այն դէպքում, եթէ պետական սէյմը չը հաստատէ նրանց։

ԼՕՆԴՕՆ։ Կիտչեներ հեռագրում է, թէ Ստէպնակէրի հեծեալ զօրաբաժինը, որ գրաւել էր Բրէմդորֆ, յուլիսի 11-ին ստիպված էր տեղի տալ բօէրների գերազանց թիւի առաջ եւ հեռանալ Բրէմդորֆից։ Զօրաբաժինը անցաւ դէպի Լէմբօվօ, որ 16 մղոն հեռու է Բրէմդորֆից։ Սպանվածները 10 հոգի են. մի քանիսը անյայտ կորել են։

ՅԱՐԻՑԻՆ։ Յուլիսի 14-ին եկաւ մամուլի գործերի գլխաւոր վարչութեան կառավարիչ իշխան Շախովսկոյ եւ ընդունեց տեղական մամուլի ներկայացուցիչներին ու տեղական լրագիրների ցենզօրին։ Վաղը նա ճանապարհ է ընկնում Բօստով Դոնի վրա։

15 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Յուլիսի 14-ին տեղի ունեցաւ Բարձրագոյն շրջագայութիւն Կրասնոյե-Սելօյի բանակում։

ԱՍԽԱԲԱԴ։ «Закаспійское Обозрѣніе» լրագրի տեղեկութիւնները Զարջուից՝ Ամուդարիայի կամրջի դէպքի մասին՝ ուղիղ չեն,—իջուածք տուել է ոչ աջակողմեան կօնուսը, այլ հետեւակ ֆիրմայի կօնուսը եւ այն շատ աննշան չափով—1/5 սաժէն։ Կամուրջը շատ լաւ դիմացաւ գետի վարարմանը։ Երթեւեկութեանը վտանգ չէ սպառնում։

ՕՄՍԿ։ Այսօր, Թագաւոր Կայսրի Օմսկ այցելելու տասնամեակի առիթով, մայր-եկեղեցում տեղի ունեցաւ մաղթանք եւ այգում—զրօսանք։

ԽԷՐՍՕՆ։ Այստեղ հասաւ Սեւծովեան փոքր նաւատորմը։ Քաղաքի բնակիչները արտագին ընդունելութիւն ցոյց տուին ծովագնացներին։

ՎԻԵՆՆԱ։ «Kaiserin Elisabeth» եւ «Centa» պատերազմական նաւերը յետ են կանչված արեւելեան Ասիայից եւ վաղը ճանապարհ կընկնեն այնտեղից։

ՀԱԱԳԱ։ Լուրը այն մասին, թէ հոլանդական կառավարութիւնը միջամտութիւն է գործում ի նպաստ խաղաղութեան հարաւային Աֆրիկայում, զուրկ է որ եւ է հիմքից։

ԿԵՕԼՆ։ «Kölnische Zeitung» հաղորդում է, թէ վէճ է ծագել սուլթանի եւ Կ. Պոլսի միջազգային սանիտարական ժանաժողովի մէջ։ Մանաժողովը կամենում է հինգօրեայ կարանտին նշանակել Եգիպտոսի համար, իսկ սուլթանը—տասնօրեայ։ Պետութիւնները հաշիւ թէ պաշտպանեն մասնաժողովին, որովհետեւ սուլթանը իրաւունք չունի միջամտելու ժանաժողովի լիազօրութիւններին այն ժամանակ միայն, երբ միջամտութիւնը հակառակ է սանիտարական միջոցներին եւ ոչ այն ժամանակ, երբ նա կամենում է, որ ձեռնարկվեն աւելի վճռական միջոցներ։

ԲԵՐԼԻՆ։ Պայքարը մաքսային տարիֆի վերաբերմամբ բորբոքվեց։ Ազատամիտ, դէմոկրատական եւ սոցիալիստական լրագիրները կատաղի ագիտացիա են քարոզում, յիշեցնելով, որ այժմեան նախագիծը վերջնական չէ եւ առանձնապէս խիստ յարձակվում են հացահատիկների ամենափոքր տուրքերի վրա։ Կալուածատէրերի շահերի պաշտպան լրագիրները խիստ հիասթափված են. նրանք ասում են, որ հացահատիկների վրա դրված տուրքերը կատարելապէս անբաւարար են։ Կաթոլիկական լրագիրները ժամանցոյց են անում կենսական պիտոյքները բարձր մաքսի ենթարկելու մասին լաւ խորհելու անհրաժեշտութեան վրա, ինչպէս առնելով արդիւնագործութեան ընկած դրութիւնը։ Վիեննայից եւ Պրէշլաւից հաղորդում են, որ այնտեղ մաքսային տարիֆը ամենալատ տպաւորութիւն է գործել։

16 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Յուլիսի 15-ին, Մեծ-Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչի անուանակոչութեան տօնի առիթով, Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորովնա, Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնա, յունաց Թագուհին եւ Նորին Բարձրութիւն Թագաժառանգը Պետերբուրգից ժամանեցին Կրասնոյե-Սելօ եւ այցելեցին Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչին։ Թագաւոր Կայսրը եւ Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնա իջեւանեցին Յարսկոյե-Սելօյի պալատում։

ԹԻՖԼԻՍ։ Յուլիսի 15-ին, Թիւրքական սահմանագծի մօտ, Կարսի շրջանի Կարաուրգան

գիւղից ոչ հեռու, տեղի ունեցաւ հանդիսաւոր բացումն այն արձանի, որ կանգնեցրած է ի յիշատակ Զիւինի կուի հերոսների՝ նրանց ընդհանուր գերեզմանի վրա։

ԱՑԵԱՋԻՈ։ Երէկվայ ճաշի ժամանակ «Բուվէ» նաւի վրա, որին ներկայ էին բոլոր ծովապետները, մինիստր-նախագահը յայտնեց ծովապետ Ժէրվէին, թէ կառավարութիւնը չնորհել է նրան «Պատուաւոր լեգէօնի» շքանշանի մեծ խաչը։

Գիշերով այն ծովային զօրաբաժինը, որի մէջ խուզարկուի ծառայութիւնը կատարում էր մի շրջանաւ, անթել հեռագրի միջոցով, յարձակումն գործեց Այեաչչիոյի վրա եւ փորձ փորձեց զօրքեր հանել ափը։

ՊԱՐԻԶ։ 96 կրկնաքուէարկութիւնների վերաբերմամբ նահանգական խորհուրդների անդամներ ընտրելու համար յայտնի են հետեւեալ հետեւանքները.—ընտրված են 83 հանրապետականներ եւ 11 պահպանողականներ. հանրապետականները ձեռք բերին 17 եւ կորցրին 7 տեղ։

ՊԵԿԻՆ։ Այն դրամագլխի եւ տոկոսների ընդհանուր գումարը, որ Չինաստանը պէտք է վճարէ, հասնում է կէս թուով մի միլիարդ տայէլի։ Պետական եկամուտների այն մասերը, որոնցով այժմ վճարվում են նախկին փոխառութիւնների պարտքերը, պէտք է միացվեն պատերազմական վարձատրութեան վճարումներին, հէնց որ փոխառութիւնները հատուցվեն։ Չինաստանը 1940 թ-ին ազատ կը լինի օտարերկրեայ պարտքերից, եթէ մինչեւ այն ժամանակ յանձն չառնի նոր պարտաւորութիւններ։ Պահիժներին եւ քննութիւններին վերաբերեալ հարցերը այսօր իրօք լուծվեցին, որովհետեւ դեսպանները գոհացան չինական յայտարարութիւններով այն մասին, թէ պահիժները մասամբ իրագործված են եւ մասամբ էլ կիրագործվեն այսուհետեւ։ Այսօր յայտնված են այն անձանց անունները, որոնք նշանակված են արտաքին գործերի մինիստրութեան պաշտօնեաներ։ Այս մինիստրութիւնը հիմնվում է Ցզունգ-լի-եամէնի տեղ։ Յայտնված անունները ընդհանուր հաւանութեան արժանացան։ Չին նշանակել է այդ հիմնարկութեան գլուխ երկու մինիստրների, Ժիլիի նախկին փոխարքայ Վան-Վէն-Շաոին եւ Ժչուն-Ինն, որոնք մեծ խորհրդի անդամներ են։ Նրանց օգնականներ նշանակված են Վաշինգտոնի դեսպանատան նախկին քարտուղարներ Զսիխուպէն եւ Լիէնֆան։ Չինական լիազօրները հրաժարական ստացան, որով պատուիրվում է նրանց բողոքել բրիտանական դեսպանատան չափից դուրս ամբացնելու դէմ, որ իշխում է կայսերական քաղաքի վրա։ Հրամանում ասված է. «Եթէ հարկաւոր է, կարելի է համաձայնվել դրա փոխանակ զօրքերի աւելացնելուն երկաթուղային գծի երկարութեամբ»։

ԽԱՐԿՈՎ։ Արտակարգ գնացքով Խարկով հասաւ հաղորդակցութեան ճանապարհների մինիստրը։ Կայարանի նոր շինութիւնը նայելուց յետոյ, մինիստրը շարունակեց ճանապարհը դէպի հիւսիս։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ։ Տօնավաճառը պաշտօնապէս բացված է։ Առեւտրականների համախմբումը մեծ չէ։ Սիբիրական նաւամատոյցի վրա ապրանքներ բերված են բաւականաչափ. ստացված են մօտ 300,000 պուդ սիբիրական ապրանքներ։

ՊԱՐԻԶ։ Մարոկկոյի դեսպանութիւնը չորեքշաբթի օրը ճանապարհ է ընկնում Պետերբուրգ։ Դեսպանութիւնը Ռուսաց Կայսրին ընծայ է տանում 10 ձիեր սուլթանի կողմից։

ՊԵԿԻՆ։ Վարձատրութեան հարցերին վերաբերեալ բանակցութիւնները առաջ են գնում. դեսպանները ընդունեցին վարձատրութեան մասին նրանց առաջարկված նախագիծը։ Անգլիան եւ Ռուսաստանը համաձայնութիւն կայացրին, որով պահանջվում է այժմեան վիճելի կէտի մասին բանակցութիւնները վերանորոգելու իրաւունքը, եթէ այդ բանը անհրաժեշտ ճանաչվի։ Սպասում են, որ երկու շաբաթից յետոյ բանակցութիւնները կաւարտվեն եւ արձանագրութիւնները կը ստորագրվեն։

ՎԱՇԻՆԳՏՈՆ։ Պեկինից ստացված տեղեկութիւններով՝ Չինաստանի ժամանակութեան չափը ջրով Շանգհայ եւ Տեանձին մուտք գործելու հարցի վերաբերմամբ, նոյնպէս եւ բանակցութիւնների մէջ արծարծված բոլոր գլխաւոր հարցերը լուծված են։ Սպասում են, որ բանակցութիւնների հետեւանքները երկու շաբաթվայ ընթացքում կը գումարվեն վերջնական արձանագրութեան մէջ, որը յետոյ կը ստորագրվի բոլոր պետութիւններից։

ՆԷԱՊՕԼ։ Բիւլբուլէն Կրիսպիի առողջութեան մասին. «Գիշերը անհանգիստ անցկացրեց, ոյժերը պակասում են, սրտի գործունէութիւնը նկատելի կերպով թուլանում է, ջղային ճընշված դրութիւնը շարունակվում է առանց փոփոխութեան»։

Կ. ՊՕԼԻՍ։ Լուրերին նայելով՝ այն միջոցների կատարման համար, որոնք ձեռք են առնվում կարգը վերահաստատելու նպատակով Հին-Սերբիայում, ենթադրվում է ուղարկել յատուկ կոմիսար եւ 4 թիւրքական բատալիոն։ «Société des puais»-ի հարցը դեռ եւս չէ լուծված։ Բ. Դուռը պատասխանեց ֆրանսիական դեսպանի վերջին յայտագրին, թէ նրա առաջարկութիւնները ներկայացված են մեծ-վիզիրին։ Մեծ-վիզիրի շրջաբերականը արգելում է թիւրք ատիճանաւորներին որ եւ է կերպով անդեկութիւններ հաղորդել երիտասարդ թիւրքերի ագիտացիայի մասին. հակառակ դէպքում նրանք կենթարկվեն ծանր պատիժների։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺՇԿ. ՎԱՀԱՆ ԵՐԾԱՐՈՒՆՈՒ

աչխատութիւններից ձեռք բերելու համար՝ այսուհետեւ պէտք է դիմեն. Тифлисъ. Книжный магазинъ „Гуттенберъ“ (Лорисъ-Меликовская, № 11), Г. Галустяну. Նոյն տեղը վաճառվում են զանազան գրքեր։ Ամեն մի նոր լոյս տեսած գիրք ցանկացողներին կարող ենք ուղարկել։

ԱՐՑԱԽԻ հայոց հոգեւոր թեմական դըպրոցի համար

ՀԱՐԿԱՒՈՐ Է

մի ուսուցիչ ռուսաց լեզուի, մի աստուածաբան՝ կրօնական առարկաներից եւ մի ուրիշը հայոց լեզուի, մատենագրութեան եւ եկեղեցական պատմութեան համար։

Ռուսաց լեզուի համար պահանջվում է համալսարանի կամ ինստիտուտի վկայական, միւս առարկաների համար արտասահմանի կամ Ս. Էջմիածնի հոգեւոր ճեմարանի վկայական։

Դպրոցի հոգաբարձութիւնը եւ տեսուչը խնդրում են ցանկացողներին դիմել փութով տեսչին պայմանների մասին տեղեկանալու եւ պայմանաւորվելու։

Տեսչի ժամանակաւոր հասցէն՝ Թիֆլիս, ս. Սարգսի վանք։

Ի տեղի Նախագահի՝
Գարեգին աւագ քահ. Յովհաննիսեան
Տեսուչ դպրոցի՝ Բենիկ վարդապետ
2—2

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ռ. եւ 1 ռ. 50 կ.։

ՏՈՒՖԼԻՍԻՆ
ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց

ԶՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն եւ սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մուները, տալիս է կաշուին քնքշութիւն եւ սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ռ. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական եւ դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Գուշկինսկայա փողոց տ. № 15, ընակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երեւանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց եւ Բագուում. նաեւ Միքայէլեան կամուրջի վրա, Պապովի եւ Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են ան ֆլապէս՝ պօստով։ 42—[illegible]

Մամուլի տակ է եւ մինչեւ սեպտեմբերի վերջը լոյս կը տեսնի

Վ. ՓԱՓԱԶԵԱՆԻ

„ԷՄՄԱ“

վէպը, 350—400 մեծադիր երես.

Վաղօրօք բաժանորդ գրվողների համար ճանապարհածախսով 1 ռուբլի։ Լոյս տեսնելուց յետոյ կը լինի ճանապարհածախսով—1 ռ. 25 կոպ. Բաժանորդ կարելի է գրվել—Բագումում պ. Ս. Օհանջանեանի մօտ, Магазинъ бывшій А. П. Петросянъ. կամ՝ պ. Ի. Մելիքեանի մօտ—Фотографія «Рембрандтъ», Торговая, Բալախանիում—պ. Իշխան Միրզաբէկեանի մօտ՝ А. Меликовъ и К°. Բիբի-Էյբաթում—պ. Արշ. Տէր-Յովհաննիսեանի մօտ, Бр. Набатовы и К°, Շուշում—պ. Ղազար Տէր-Ղազարեանի մօտ։ Թիֆլիսում—պ. Արշակ Մեհրաբեանի մօտ, «Տարազ» շաբաթաթերթի խմբագրատանը։
1—3

ՎԱՐԺՈՒՀԻ

Մանկական պարտէզի համար հրաւիրում է Թաւրիզի Ամերիկեան Հայոց Բարեգործական ընկերութեան վարչութիւնը։ Դիմել բժշկապետ Բ. Նաւասարդեանին, ժամի 11—12-ը։ 2—5

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ
ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

«Շէքսպիր եւ իր Համլէտ ողբերգութիւնը», Պ. Ադամեանի—1 ռ.
«Խէչօի Թուզը», ֆարս-վոդեվիլ 1 արար. 50 կ.
«Կռուապատճառը ես էի», կոմէդիա-վոդեվիլ 2 գործողութեամբ—50 կ.
«Նիսիա», վոդեվիլ 1 արարուածով—40 կ.
«Վայրենի», կատակերգ. 1 գործ.—50 կ.
«Մօդա», կոմէդիա 1 արարուածով—50 կ.
«Մարիա Ստիւարտ», ողբերգ. 5 արար.—50 կ.
«Թագի համար». ողբ. 5 արար.—50 կ.
«Կեղծ ազնուհիք», թատերերգութիւն—40 կ.
«Բանաստեղծը», կատակ. 1 արար.—25 կ.
«Մարիանա», դրամա 3 գործող.—1 ռ.
«Շէքսպիր», «Օտէլլօ», «Համլէտ», «Վենետիկի վաճառականը», «Արքայ Լիր», «Մակբէթ», եւ «Ինչպէս կուզէք», ողբ. 5 արար.—2 ռ. 50 կ.
«Մանկական թատրոն», թարգ. տիկ. Մարգարիտի—1 ռ.
«Սխալ հաշիւ», կոմէդիա 4 գործող. 1 ռ.
«Մեղապարտ հրէշներ», դրամա 4 գործ. 30 կ.
«Խոչընդոտ», Դոդէի, կատակերգ. 4 արար. 50 կ.
«Աժուսինները», կոմ. 5 արար. Սունդուկեանցի—1 ռ.
«Աւազակներ», Շիլլերի, ողբերգ.—50 կ.
«Պատիւ», Զուդերմանի, կոմ. 4 գործ. 60 կ.

Նոյն տեղից կարելի է ձեռք բերել ամեն տեսակ դասագրքեր։ Գումարով գնողներին զիջում կը լինի։

Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ „Гуттенбергъ“ (Лорисъ-Меликовская улица, № 11), Г. Галустяну. 2—2

Թիֆլիսի Նաւթարդիւնաբերական Ընկերութեան Վարչութիւնը

պատիւ ունի հայտնելու ի տեղեկութիւն պ.պ. փայատէրերի, որ ընկերութեան ընդհանուր ժողովը տեղի կունենայ չորեքշաբթի, օգոստոսի 1-ին, երեկոյեան 8 ժամին, Գուրգէնովի տանը, Միքայէլեան փողոցում, № 143, Վէտցէլի հիւրանոցի կողքին։

Հրաւէրների առարկաներն են՝
1) Վարչութեան մի դերեկտորի ընտրութիւն,
2) Վերաստուգող յանձնաժողովի մի անդամի եւ երեք կանդիդատների ընտրութիւն,
3) Վարչութեան զեկուցումն։ (17, 24, 30) 1—3

Ֆիլանսների մինիստրի թոյլտուութեամբ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Баку, Прачешная, домъ Теръ-Ованесова)

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին ժամանակակից-առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։ Կուրսերում աւանդվում են՝ 1) Առեւտրական թուաբանութիւն եւ թուաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշուապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առեւտրական եւ բանկային. 3) Առեւտրական թղթակցութիւն. 4) Առեւտրական տնտեսագիտութիւն. 5) Առեւտրական եւ մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն եւ արագագրութիւն (ուղղումն ձեռագրի)։

Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում եւ Եղբ. Յովհաննեան եւ ընկ. ԲԱԳՈՒԻ բաժանմունքում։ Կուրսերի կանոնագրութիւնը (уставъ) եւ մանրամասն ծրագիրը—տրվում եւ ուղարկվում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ БАКУ, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. (ե. չ.) 6—25

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Լերմոնտովսկայա փողոց, № 9)

Ցանկացողները ունենալ իրանց առեւտրական գործերի համար ուսման ընթացքը աւարտած աշակերտներ եւ աշակերտուհիներ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին, Ս. Մանուէլեանցին։ Աւարտողները ստացել են ժամանակակից առեւտրական կրթութիւն, Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատված ծրագրի համեմատ, եւ ունեն օրինաւոր ատեստատներ։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԿՍՎԵԼՈՒ ԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ի

Կուրսերի ծրագիրը եւ կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Յովհաննէսների բանկային գրասենեակում եւ կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ ТИФЛИСЪ, учредителю коммерческихъ курсовъ С. П. Мануэльянцу. (ե.) 4—12

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ դասընթացքի XIII շրջան
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Ձեռնարկի առեւտրական և գործարանական հաշուապահութեան»

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու տեսի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, բարձրաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա.) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առեւտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերօսինի գործարանական հաշուետուութեան։
Բ) Առեւտրական թուաբանութիւն։
Գ) Առեւտրական նամակագրութիւն։
Դ) Առեւտրական եւ մուրհակների կանոնագրութիւն։
Ե) Գեղագրութիւն և ամենավատ ձեռքերի ուղղելը։

Պարապմունքները սկսվելու են 1901 թ-ի սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՁՈՐՍ ամսից յետոյ։

ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԿՈՒՐՍԻ ՎՃԱՐՆ Է 60 ՌՈՒԲԼԻ

Ցանկացողները թող դիմեն դրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ԿՈՒԿԻԱ, Նիկոլաեվսկայա փողոց, սեփական տուն, № 46։ (Николаевская ул. № 46)։

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ ԳԻՆՆ Է 3 ռ. 50 կոպէկ։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ 7—25

Дозволено цензурою, Тифлисъ, 16 Іюля 1901 г.
Электропечатня Грузин. Изд. Т—ва, Б.-Ванкская ул.